Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2017 թվականի

2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների և խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները և խնդիրները»** հարցը (զեկուցող՝ ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր Մ.Ն.Հարությունյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. կիսամյակի ընթացքում ռեկտորատը, ուսումնական բաժինը, դեկանատները և ամբիոնները հետևողական աշխատանք են կատարել ուսումնական գործընթացի կազմակերպման, կատարելագործման և քննաշրջանը կազմակերպված անցկացնելու ուղղությամբ: Համալսարանում ուսումնական քննական գործընթացը կազմակերպվել է գործող կարգերին և գիտական խորհրդի կողմից հաստատված որոշումներին համապատասխան: Կիսամյակի ընթացքում կազմակերպվել և անցկացվել են համակարգչային և գրավոր թեստային ստուգարքներ և քննություններ համահամալսարանական հիմնական առարկաների գծով: Քննությունները կազմակերպվել են գործող կարգի պահանջներին համապատասխան: Խախտումներ և ձախողումներ չեն արձանագրվել:

Ռեկտորատը, դեկանատները և ամբիոնները մեծ ուշադրություն են դարձրել ոչ միայն քննական գործընթացի կազմակերպման և անցկացման, այլ նաև կիսամյակի ընթացքում ուսումնական գործընթացի կազմակերպման կատարելագործման հարցերին: Մշակվել և ներդրվել է առաջին կուրսերում գնահատման քսան միավորային համակարգը. կիրառվել է միջանկյալ ընթացիկ ստուգումների և ամփոփիչ քննությունների եղանակը: Բակալավրիատի հեռակա ուսուցումը հնարավորինս համապատասխանում է առկա ուսուցման համակարգին: Կիսամյակի ընթացքում բավական աշխատանքներ են կատարվել ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի արդիականացման, ուսումնական գործընթացի կազմակերպման կատարելագործման, դասախոսների անհատական բեռնվածությունների և դրանք գործող պահանջներին համապատասխանեցման ուղղությամբ:

Առկա ուսուցման բակալավրիատի ուսանողների ուսման առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 73.2%՝ նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանի 76.6%-ի դիմաց: «Գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը կազմել է 18.9, «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողներինը՝ 15.3% (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում, համապատասխանաբար, 20.5 և 17.9%): Ամենաբարձր առաջադիմությունը գրանցվել է ֆինանսական ֆակուլտետում՝ 79.7% (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 79.4%), իսկ

ամենացածրը՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետում՝ 65.4% (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 68.3%): Հատկապես բարձր է պետական պատվերի համակարգում սովորող ուսանողների ուսման առաջադիմությունը. «գերազանց», «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը կազմել է 69.4% (նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանում՝ 77.1%):

Առկա ուսուցման մագիստրատուրայի ուսանողների առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 72.9%՝ նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանի 76.2%-ի դիմաց: Ուսանողների 30.8%-ը կիսամյակն ամփոփել է «գերազանց», 12.8%-ը՝ «գերազանց» և «լավ» գնահատականներով (նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանում, համապատասխանաբար, 27.7 և 12.2%): Նախորդ տարվա ցուցանիշների համադրումից ակնհայտ է. գերազանց գնահատականներով սովորողների ընդհանուր առաջադիմությունը բարձրացել է 3.1%-ով:

Հեռակա ուսուցման մագիստրատուրայում առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 53.7%՝ նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանի 59.9%-ի դիմաց: «Գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը կազմել է 6.7, «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողներինը՝ 5.1% (նախորդ ուսումնական տարվա նույն ժամանակաշրջանում, համապատասխանաբար, 9.4 և 7.3%):

Հեռակա ուսուցման բակալավրիատի I-IV կուրսերում արձանագրվել են հետևյալ ցուցանիշները. քննաշրջանից հետո առաջադիմությունը կազմել է 29.6%, «գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը՝ 0.5 (7 ուսանող), իսկ «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողներինը՝ 2.1% (27 ուսանող):

Ինչ վերաբերում է առաջին վերահանձնումից հետո ուսման առաջադիմության արդյունքներին, ապա նշենք, որ բացարձակ առաջադիմությունը առկա ուսուցման բակալավրիատի I-IV կուրսերում 73.2-ից բարձրացել է 81.4%-ի, իսկ անբավարարների և չներկայացածների տեսակարար կշիռը նվազել է՝ 26.8-18.6%:

Առկա ուսուցման մագիստրատուրայում վերահանձնումից հետո առաջադիմությունը կազմել է 82.4, իսկ անբավարարների և չներկայացածների տեսակարար կշիռը՝ 17.6%:

Հեռակա ուսուցման մագիստրատուրայում առաջադիմությունը առաջին վերահանձնումից հետո կազմել է 76.3%, իսկ անբավարարների և չներկայացածների տեսակարար կշիռը նվազել է՝ 23.7%:

Հարկ է նշել, որ 2016-2017 ուսումնական տարում հեռակա ուսուցման մագիստրատուրայում 339 մագիստրանտից, ում թույլատրվել է մասնակցել մագիստրոսական թեզի պաշտպանությանը, ավարտել են 326-ը (96.2%): Նախորդ տարիներին թեզը չպաշտպանած 8 շրջանավարտներից պաշտպանել և դրական գնահատական են ստացել 8-ը:

Արձանագրելով կատարված աշխատանքները, խորհուրդը, միաժամանակ, նշում է՝ դեռևս կան թերություններ և չլուծված խնդիրներ.

1. Աշխատանքային և կատարողական կարգապահության ու ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում:
2. Ուսանողների դասահաճախումների կազմակերպման (հատկապես մագիստրատուրայում), դրանց գրանցումների և վերահսկողության գործընթացում:
3. Թերություններ կան առանձին դասախոսների կողմից ուսանողների հաճախումների, ակտիվության գնահատման և ամփոփման աշխատանքներում:
4. Փորձառությունների կազմակերպման անցկացման, վերահսկողության և գնահատման գործընթացում:
5. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության, աշխատանքների ղեկավարման, կատարման, գրախոսման և պաշտպանության գործընթացներում:
6. Որոշ մոդուլների գծով առարկայական հարցաշարերը և թեստային բազաները խիստ բարեփոխման և թարմացման կարիք են զգում, քննաշրջանից առաջ թեստային բազաների ստուգումները ձևական բնույթ են կրում, կամ ընդհանրապես չեն թարմացվում, որոշ ամբիոնների վարիչների կողմից այդ գործընթացները չեն վերահսկվում:
7. Կրթական ծրագրերի և առարկայական ծրագրերի արդիականացման և դրանք գործատուների ժամանակակից պահանջներին համապատասխանեցման աշխատանքներում:
8. Խնդիրներ կան ներքին սփյուռքի և քոլեջներից ընդունվել ցանկացողների մասնագիտությունների միջև տեղաբաշխման հարցում:
9. Մագիստրոսական խմբերի ձևավորման, կրթական ծրագրերի արդիականացման, դասընթացների կազմակերպման և գնահատման գործընթացում:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Հանձնարարել ռեկտորատին՝**

1) մշակել միջոցառումներ թերությունների վերացման և նշված բարեփոխումները ուսումնական գործընթացում ներդնելու ուղղությամբ.
2) վերահսկողություն սահմանել ամբիոններում դասախոս կադրերի ընտրության գործընթացի վրա՝ նպաստելով, որպեսզի բուհում դասավանդեն բարեխիղճ, մասնագիտական բարձր որակներով օժտված, ակտիվ գիտական գործունեություն կատարող, դրական հատկանիշներով առանձնացող բարեկիրթ դասախոսներ.
3) հետևել դեկանատների և ամբիոնների աշխատանքային և կատարողական կարգապահությանը: Յուրաքանչյուր խախտում դարձնել որոշակի քննարկման առարկա և սահմանել համապատասխան պատիժներ.

4) քննարկել դասավանդման գործընթացում իր պարտականությունների մեջ թերացած դասախոսների և ամբիոնների հարցը՝ այն ուղղակիորեն կապելով պարգևատրումների համակարգի հետ.
5) քննարկել և ուսումնական գործընթացում ներդնել հեռակա ուսուցման համակարգի գիտելիքների տրամադրման և ստուգման գործընթացը առկա ուսուցման համակարգին համապատասխան կազմակերպելու հարցը.
6) հասնել նրան, որ յուրաքանչյուր կրթական մոդուլ ունենա որոշակի անվանում.
7) իր ֆունկցիոնալ պարտականությունները և հանձնարարությունները ժամանակին և բարեխիղճ չկատարած, նկատված թերություններին սկզբունքային մոտեցում չցուցաբերած դեկանների և ամբիոնների վարիչների հարցը քննարկել ռեկտորատում:

2. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին՝

1) հետևողական աշխատանք կատարել խորհրդի որոշումները կենսագործելու և նկատված թերությունները և բացթողումները շտկելու ուղղությամբ.
2) ամփոփաթերթերում ուսանողների ակտիվության սխալ հաշվարկման ու գրանցման, ինչպես նաև արդյունքների սխալ լրացման դեպքերը քննարկել և խախտողներին ներկայացնել վարչական տույժի (պարգևատրումից զրկման).
3) շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը բարձր մակարդակով անցկացնելու նպատակով ամբիոնների վարիչների հետ համատեղ քննարկել հանձնաժողովների նախագահների և անդամների թեկնածությունները և մինչև մարտի 20-ը ներկայացնել ռեկտորատ.
4) ամենօրյա հսկողություն իրականացնել կատարողական կարգապահության, ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ: Դասախոսների և ուսանողական խմբերի կողմից դասաձախողումների յուրաքանչյուր դեպք քննարկել դեկանատի և (կամ) ֆակուլտետի խորհրդի ու ամբիոնների նիստերում, կիրառել համապատասխան պատժամիջոցներ՝ անհրաժեշտության դեպքում հարցը դարձնելով նաև ռեկտորատի քննարկման առարկա.
5) հսկողություն սահմանել դասախոսների հաճախումների հաշվառման գործընթացի վրա. խախտման պարբերաբար կրկնվող դեպքերը քննարկել և առաջարկություն ներկայացնել ռեկտորատ նրանց տույժի ենթարկելու վերաբերյալ (ընդհուպ պարգևատրումից զրկել).
6) պարբերաբար քննարկել ուսանողների բացակայությունների հարցը, մշակել միջոցառումներ դրանք նվազեցնելու ուղղությամբ.
7) ֆակուլտետների խորհուրդների նիստերում հանգամանալից քննարկել քննաշրջանի արդյունքները և գիտական խորհրդի որոշումները, մշակել միջոցառումներ (նշելով պատասխանատուներ) և հետևել դրանց կատարման ընթացքին:

3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝

1) պարբերաբար թարմացնել և բարելավել թեստային բազաները յուրաքանչյուր կիսամյակում և դրանք ավարտել մինչև յուրաքանչյուր կիսամյակի երկրորդ ամսվա 10-ը.
2) մեծ ուշադրություն դարձնել մագիստրատուրայում դասավանդողներին ներկայացվող պահանջներին. ընդգրկել միայն գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում ու պահանջվող մասնագիտական փորձ ունեցող դասախոսներին, նաև՝ կառավարման համակարգի առաջավոր մասնագետներին.
3) դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների անցկացման որակի, արտալսարանային աշխատանքների, դասախոսների կատարողական կարգապահության հարցերը պարբերաբար քննարկել ամբիոնների նիստերում: Բողոքարկումների գործընթացը կազմակերպել միայն հանձնաժողովներով (հանձնաժողովում ընդգրկել նաև դասավանդող դասախոսին): Գնահատականի յուրաքանչյուր փոփոխություն դարձնել քննարկման առարկա.
4) ձևականություններից խուսափելու համար 2017 թվականի սեպտեմբերից կազմակերպել դասալսումներ, քննարկել ամբիոններում և արդյունքները ներկայացնել ռեկտորատ.
5) հետևել թեստային քննությունների առաջադրանքների կազմմանը. գնահատման գործընթացի յուրաքանչյուր խախտում դարձնել քննարկման առարկա, մշակել որոշակի միջոցառումներ նման երևույթները բացառելու ուղղությամբ.
6) հետևողական աշխատանք կատարել ուսանողների հետ, օժանդակել վարձավճարների գանձման գործընթացին.
7) զբաղվել ուսանողների փորձառությունների անցկացման վայրերի ընտրության, հաշվետվությունների ժամանակին ներկայացման և պաշտպանության հարցերին.

4. Սույն որոշումը քննարկել ֆակուլտետների խորհրդակցություններում, մշակել միջոցառումներ ուսումնական գործընթացը բարելավելու ուղղությամբ:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել պրոռեկտորներ Մ.Ն.Հարությունյանին և Պ.Ա.Քալանթարյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

17.03.2017 թ.